ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ
ԱՐՔԱՅԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԸ

Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան Վանքի թանգարան-մատենադարանը իր շուրջ 700 գրչագրերից և հարիւրաւոր այլ կարգի իրերից ու նկարներից բացի, ունի նաեւ արքայական 23 հրովարտակ, որոնք կարեւոր տեղ են գրաւում թանգարանի հաւաքածուների մէջ:*

Թանգարան այցելող իւրաքանչիւր անձ, իր մէկ կամ մի քանի այցելութիւններով բնականաբար հնարաւորութիւն չի ունենալ մի առ մի կանգ առնելու թանգարանում գտնուող ամէն մէկ իրի, նկարի ու հրովարտակի վրայ:

Դժուար է նաեւ մէկ ակնարկով ընդգրկել բազմաթիւ ու այլազան իրեր և պահել մտքում: Ուստի իւրաքանչիւր անհատ, մի այցելութեան ընթացքում հազիւ հնարաւորութիւն է ունենում անդրադառնալու թանգարանի միայն որոշ իրերին և ի մասնաւորի նրանց՝ որոնք իր ուշադրութեան յատուկ առարկան են: Դրա համար էլ թանգարանը, իւրաքանչիւր այցելութեան համար միշտ մի նորութիւն ունի պահած, որ մինչ այդ վրիպել էր այցելուի աչքից:

Ս. Ամենափրկչեան Վանքի թանգարան-մատենադարանում ներկայիս պահւում են արքայական 23 հրովարտակ, որոնց ամենահինը կրում է փրկչական 1564 թիւը, տրուած Շահ-Աբբասեան մեծ գաղթից առաջ:

Թանգարանի այս հրովարտակները Իրանահայ կեանքի իրադարձութիւններում ներկայացնում են պատմական խոշոր արժէք, որոնց բովանդակութիւնների հիման վրայ լաւագոյնս կարելի է ներկայացնել անցեալ դարաշրջաններին տիրող վիճակն ու Հայ ժողովրդի ընդհանուր կացութիւնը:

Թւով 23 այս հրովարտակները տրըւած են Իրանի 15 արքաների կողմից. սրանցից չորսը խնդրագրեր են և կրում են արքայական մակագրութիւններ:*

Հրովարտակները ցուցադրուած են թանգարանի թիւ 2 սրահում: Ստորեւ նրանց լրիւ ցանկը, ըստ թուականների:

1.— Շահ Թահմազ

Հրովարտակ համար 163, *փրկչական* 1564 *թ.* (*հէջրաթի լուսնային* 972 *թ.*): *Տըրւած է «թալա» կոչուած հարկի գիջման առթիւ:*

2.— Շահ Համզա Միրզա

Հրովարտակ համար 164, *փրկչական* 1585 *թ.* (*հէջ. լուս.* 993 *թ.*): *Արհեստաւոր Սիմոնին ոսկեայ սուրի պատրաստութեան համար նուէր տալու առթիւ:*

3., 4.— Շահ Աբբաս Ա. Մեծ.

Հրովարտակներ 165 *և* 166, *փրկչական* 1606 *թ.* (*հէջ. լուս.* 1014 *թ.*) *և* 1618 *թ.* (*հէջ. լուս.* 1028 *թ.*) *տրուած Հայերի և Պարսիկների մէջ եղած վէճի և Ջայանդէռուդ գետի ափին Հայերին նուիրած հողերի առթիւ:*

5., 6., 7., 8.— Շահ Սէֆի

Հրովարտակներ համար 169, *փրկչական* 1629 *թ.* (*հէջ. լուս.* 1038 *թ.*), *համար* 230, *փրկչական* 1630 *թ.* (*հէջ. լուս.* 1039 *թ.*), *համար* 170, *փրկչական* 1631 *թ.* (*հէջ. լուս.* 1041 *թ.*), *համար* 172, *փրկչական* 1633 *թ.* (*հէջ. լուս.* 1043 *թ.*). *տրուած են՝ Հայերի կառուցած տների, վաճառականների վճարելիք տուրքի, նրանց օտար երկրներում մահացածների ժառանգութեանց, և ճանապարհներին ստացուող մաքսերի առնչութեամբ:*

---

*) Թանգարան-մատենադարանի գրչագրերի մասին տեսնել «Ալիք» ամսագիր, 1963 թ. համար 6 (Յունիս), իսկ ընդհանուր թանգարանի մասին՝ «Ալիք» օրաթերթ, 28, 29, 30 Ապրիլ և Մայիս 1964:

*) Բացի սոյն ֆերմաններից, վանքում կան հարիւրաւոր այլ հրովարտակներ և նման գրութիւններ, որոնք կարիք ունեն ուսումնասիրութեան:

digitised by A.R.A.R.@

9 — Շահ Աբբաս Բ.

Հրովարտակ համար 167, փրկչական 1642 թ. (հէջ. լուս. 1052 թ.), Խոջա Սաֆռազին զառ կապա և վերարկու նուիրելու առթիւ:

10 — Շահ Սուլէյման

Հրովարտակ համար 171, փրկչական 1668 թ. (հէջ. լուս. 1079 թ.), հրահանգում է Պարսիկ հողատէրերին չխառնուելու Փերիա, Լնջան և Ջարմահալ գաւառների Հայերի կրօնական և ամուսնական խնդիրներին:

11 — Շահ Սուլթան Հուսէյն

Հրովարտակ համար 173, փրկչական 1707 թ. (հէջ. լուս. 1119 թ.), Ջուղայի եկեղեցիներից տուրք չգանձելու առթիւ:

12., 13., 14 — Նադէր Շահ

Հրովարտակներ համար 168, փրկչական 1741 թ. (հէջ. լուս. 1154 թ.), համար 177, փրկչական 1742 թ. (հէջ. լուս. 1155 թ.), համար 175, փրկչական 1743 թ. (հէջ. լուս. 1156 թ.). երեքն էլ մակագրութիւններ են, տրուած վաճառականների դատական գործերը առանց միջնորդների վարելու, ճանապարհներին սակից աւելի մաքս չառնելու և չունեցած ապրանքները կառավարութեան կողմից պահանջելու առթիւ:

15 — Քէրիմ խան Զանդ

Հրովարտակ համար 174, փրկչական 1752 թ. (հէջ. լուս. 1166 թ.), Ջուղայի Հայերին անտեղի չնեղացնելու առթիւ:

16 — Ալի Մարդան խան

Հրովարտակ համար 176, փրկչական 1780 թ. (հէջ. լուս. 1194 թ.): Մակագրութիւն խնդրագրի վրայ, Ջուղայեցիների տները չխուզարկելու և հացահատիկ չպահանջելու առթիւ:

17 — Ֆաթ Ալի Շահ

Հրովարտակ համար 179, փրկչական 1832 թ. (հէջ. լուս. 1248 թ.), Ջուղայի Նոր նշանակուած առաջնորդին լաւ ընդունելու և «Մանալ» կոչուած հարկը չգանձելու առթիւ:

18 — Մահամմադ Շահ

Հրովարտակ համար 178, փրկչական 1844 թ. (հէջ. լուս. 1260 թ.), Նոր-Ջուղայի Գասկ կոչուած թաղի հողերը Վանքին պատկանելու մասին:

19., 20., 21 — Նասրէդին Շահ

Հրովարտակներ համար 181, փրկչական 1858 թ. (հէջ. լուս. 1275 թ.), համար 182, փրկչական 1880 թ. (հէջ. լուս. 1297 թ.) և համար 180, փրկչական 1882 թ. (հէջ. լուս. 1299 թ.): Վերաբերում են իսլամացած Հայերի ժառանգական խնդիրների քննութեան, տարեկան հազար ռիալ Հայ կոյսերին և հազար ռիալ Նոր-Ջուղայի Նորաբաց դպրոցին պետական գանձարկղից վճարելուն:

22 — Ռէզա Շահ Փահլաւի

Հրովարտակ համար 231, փրկչական 1932 թ. (հէջ. շամսի 1311 թ.), Արքայի արձանը Վանքի թանգարանում զետեղելու առթիւ:

23 — Մահամմադ Ռէզա Շահ Փահլաւի

Հրովարտակ համար 299, փրկչական 1955 թ. (հէջ. շամսի 1334 թ.), Արքայի արձանը Վանքի թանգարանում զետեղելու առթիւ:

Սոյն հրովարտակներից չորսը, թիւ 168, 175, 176 և 177, խնդրագրեր են՝ ներկայացուած վաճառականների կողմից, որոնց լուսանցքներում որպէս հրաման մակագրել են արքաները, խնդրարկուների դիմումները յարգելով:

Հրովարտակները գրուած են դժուար ընթեռնելի և «շէքեասթա» ձեռագրերով, որոնց բառացի թարգմանութիւնը դժուար է և ժամանակի մեծ կորուստ. ուստի այստեղ տալիս ենք վերջին երկուքի և Շահ Աբբաս Մեծի կողմից 1606 թուին տրուած հրովարտակի լրիւ թարգմանութիւնը: Սոյն վաւերաթուղթը Հայերին Իրան բերելուց յետոյ տրուած առաջին հրովարտակն է և ունի պատմական խոշոր նշանակութիւն: Հրովարտակը ցոյց է տալիս Շահի ունեցած համակրանքն ու ջերմ վերաբերմունքը դէպի Հայ գաղթական ժողովուրդը:

Մնացեալ հրովարտակների համար տալիս ենք միայն բովանդակութիւնները, օգտուելով թանգարանի գոյքամատեանից և անձնական ուսումնասիրութիւններից:

Ստորեւ այդ հրովարտակները, ըստ վերը նշուած ցանկի:

1 — Շահ Թահմազ. Հրովարտակ համար 163, փրկչական 1564 թ.: Մեծութիւն՝

digitised by A.R.A.R.@

54×23 սմ.*: Եզրերին ունի կարմիր թուղթ: Գրութիւնը 12 տող, իսկ լուսանցքում՝ 5 տող: Կրում է 3 կնիք, երկուսը ներքեւում, մէկը վերը, որի մօտ կան մի քանի ոսկեգիր փառաբանական բառեր: Միւս էջում ունի հայերէն բացատրութիւն:

Հրովարտակն ուղղուած է Նախիջեւանի շրջանի դարուղային, քալանթարներին ու գիւղապետներին, որով վերջնականօրէն ու խստիւ արգելում է այլեւս «Թալա» կոչուած հարկը պահանջել ժողովրդից. ապա նզովք է կարդում եւ հրամայում, որ նզովագիրը փակցուի մզկիթում, աւելացնելով, որ ինքը երազում իրապէս տեսել է Հազրաթ Ամիրօլ-Մօմէնունին, որ ասել է իրեն թէ այդ «Թալա» կոչուած հարկը նուիրում է իր Հասան որդուն: Նոյնպէս հրամայում է, որ եթէ այդ հարկը հաւաքուել է լրիւ կամ մասամբ, յետ վերադարձուի տէրերին եւ ստացական առնուի եւ ուղարկուի իրեն:

2.— Շահ Համզա Միրզա. Հրովարտակ համար 164, փրկչական 1585 թ.: Մեծութիւն՝ 17×12 սմ.: Գրութիւն՝ երկու եւ կէս տող, մի կնիք ներքեւում:

Հրովարտակն ուղղուած է Հին-Ջուղայի տանուտէրներին եւ յայտնում է որ հրամայուած է մայրաքաղաքի (Թաւրիզի) քալանթարին՝ երեք թուման դրամ վճարել արհեստաւոր Սիմոնին(?), ի վարձատրութիւն նրա պատրաստած ոսկեայ սուրի:

3.— Շահ Աբբաս Ա. Մեծ. Հրովարտակ համար 156, փրկչական 1606 թ.: Մեծութիւն՝ 35×21 սմ.: Շուրջը եզերուած կարմիր թղթով: Գրութիւնը ինը տող եւ մի կնիք վերեւում: Հրովարտակի միւս երեսին՝ երկու տող նոյն բովանդակութեամբ բացատրութիւն. «Էս Շահաբասին ըռէքամընը մոչով զօնաղին ազար չի խասացնի»:

Ստորեւ հրովարտակի լրիւ թարգմանութիւնը.

«Աշխարհասաստ հրաման նրա համար, որ բարձրապատւէն նախարար եւ նախարարալոյս բարձրապատիւ Միրզա Մահամադ Սպահանի արքունատան նախարարն իմանայ թէ խնդրագիրը որ Ջուղայի ժողովրդի եւ Մարբանանի* (Մարնունի) մարդկանց կռուի մասին գրել էր ստացուեց եւ նրա բովանդակութիւնը իմացուեց:

Կեցցէ՛ն, երեսները պարզ, իրօք այս է կերպը հիւրամեծարութեան: Մի ժողովուրդ, որ ի պատիւ մեզ լքել է իր հազարամեայ հայրենիքը եւ խարւարներով ոսկին ու մետաքսը թողած ձեր տունն է եկել, տեղ ունի՞ որ մի քանի սեխի, մի քանի լիտր խողողի ու բամբակեհատի համար նրանց հետ կռուէք: Ջուղայում (Հին, Լ. Մ.) տներ կային, որ մէկի վրայ երկու հազար թուման էին ծախսել, նրանց աւերել եւ իրենց ընտանիքները չալակներն առած այստեղ են եկել. Նրանց հետ այսպէ՞ս պէտք է վարուել: Շատ եւ շատ վատ բան էք արել, անչափ ու անսահման զարմանում եմ քեզանից, որ Մարբանանի ժողովրդին չես կոտորել: Մուրչախորթի ժողովրդին արածը թող նրանց համար խրատ լինի, որ հիւրերիս հետ վատ էին վարուել. տեսար թէ ի՛նչ բերեցի նրանց գլխին:

Ինչեւէ. ամէն կերպ Ջուղայեցիների սիրտն առ եւ այնպէս արա՛, որ մխիթարուած ու գոհ մնան: Նրանց Փլասան այգում կամ Մարբանան գիւղում տեղ տուէք: Ինչքան որ պետական կալուածներում տեղ լինի նրանց յատկացրէք, իսկ մնացածների համար էլ հողագործների տները վարձիր եւ տեղ յարմարեցրու, մինչեւ որ բարձրեալն Աստուծոյ յոյսով, ապագայում իրենց համար տներ կառուցեն: Անհրաժեշտ է որ նրանց հետ վէճ ունեցած խմբին խիստ պատժի ենթարկես (որ յետագայում նման դէպքերը չկրկնուեն?): Ռաբիօլասանի 6-ին 1014»:

4.— Շահ Աբբաս Ա. Մեծ. Հրովարտակ համար 166, փրկչական 1618 թ.: Մեծութիւն՝ 36×21 սմ.: Եզերուած կարմիր թղթով: Գրութիւնը եօթ տող եւ մի կնիք վերեւում:

Սոյն հրովարտակով Շահ Աբբաս Մեծը, իբր արտայայտութիւն իր ունեցած արքայական բարձր շնորհների ու սիրոյ, Ջուղայի Հայերին է նուիրում Զայանդէռուդ

*) Այս և հետագայ թուերը ցոյց են տալիս հրովարտակների թղթի չափերը, կարմիր եզրերի հետ միասին: Նրանցից ոմանք եզերուած են կարմիր թղթով, որոնք փակցուել են գրութեան առաջ կամ յետոյ: Հրովարտակները ունեն փայտեայ շրջանակներ՝ ապակիներով:

*) Պարսկական մի գիւղ Ջուղայի արեւմտեան կողմում:

digitised by A.R.A.R.@



Շահ Աբբաս Մեծի Հրովարտակը, 1606:

գետի աջ ափի եզերքի պետական հողերը և հրամայում պետական դիւանապետին, որ մատեանների մէջ այդ հողերը արձանագրուեն Հայերի անունով:

5.— Շահ Սէֆի. *Հրովարտակ համար* 169, *փրկչական* 1629 *թ.։ Մեծութիւն՝* 32.5×22.5 *սմ.: Եզերուած կարմիր թըղթով: Գրութիւնը եօթ տող և մի կնիք վերը, մօտը մի քանի բառեր:*

Հրովարտակը հրամայում է հարկային նախարարին, որ Ջուղայեցիներին նուիրած հողերը, ինչպէս և իրենց գնած անձնական հողերը եթէ ունեն կալուածագիր և նրանց վրայ տներ են կառուցել, համարուեն սեփական և ոչ թէ պետական. ապա նոյնը յիշատակել դիւանատան մատեաններում, որպէսզի Ջուղայեցիները ստիպուած չլինեն ամէն տարի նոր հրամանագիր խնդրելու:

6.— Շահ Սէֆի. *Հրովարտակ համար* 230, *փրկչական* 1630 *թ.: Մեծութիւն՝* 27.5×16 *սմ.: Փակցուած կարմիր թղթի վրայ: Գրութիւնը վեց տող, մի կնիք վերը և կէս տող գրութիւն:*

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Նոր-Ջուղա

(Շարունակելի՝ 1)

digitised by A.R.A.R.@